



# Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2016թ. թիվ 27

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի 2016թ. սեպտեմբերի 24-ին կայացած նիստում հանձնաժողովի անդամների քննարկմանը ներկայացվեց օրակարգով հաստատված երկու հարց՝ Զբաղվածության կարգավորման 2017 թվականի պետական ծրագրի նախագիծը և ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» նոր ծրագրի կազմակերպումը:

Օրակարգի առաջին հարցի առնչությամբ հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնակատար Ա.Ասատրյանը տեղեկացրեց, որ մինչև կառավարության քննարկմանը ներկայացնելը զբաղվածության ծրագիրը պետք է քննարկվի եռակողմ հանձնաժողովում:

Նշենք, որ զբաղվածության կարգավորման պետական ծրագրի նպատակը բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումն է: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ ըստ առաջնահերթությունների կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության խթանմանը, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

Հարցի առնչությամբ քննարկումներ ծավալվեցին զբաղվածության ոչ արդյունավետ ծրագրերի շուրջ:

Հանձնաժողովի անդամ, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Բ.Խարատյանը նկատեց, որ թեև ծրագիրն արդեն իսկ արժանացել է Հանրապետական համաձայնեցման կոմիտեի (կոմիտեի անդամ է նաև ինքը՝ Բ.Խարատյանը) դրական եզրակացությանը, այնուամենայնիվ, կան մտահոգիչ փաստեր: Մասնավորապես՝ բնակչության գործազրկության աճը, գործազրկության մակարդակը այլ երկրների համեմատությամբ ՀՀ-ում առանց այն էլ կրկնակի բարձր է: Այս առնչությամբ Բ. Խարատյանն առաջարկեց նոր մոտեցումներ ձևավորել, կիրառել առավելապես հեռանկարային ծրագրեր:

Զբաղվածության կարգավորման 2017թ. ծրագիրն արժանացավ հանձնաժողովի դրական եզրակացությանը:

Օրակարգի հաջորդ հարցով նախարարության ներկայացուցիչը զեկուցեց, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ 2016թ. մայիսին Ժնևում կայացած տարեկան համաժողովում սոցիալական եռակողմ գործընկերության մասնակցության ժամանակ պայմանավորվածություն է ձևափոխվել վերսկսել «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը Հայաստանում: Հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձևափոխվել «Արժանապատիվ աշխատանք» նոր ծրագրի մշակման աշխատանքային խումբ ստեղծել և արդյունքում մշակված ծրագիրը ներկայացնել սոցիալական գործընկերների քննարկմանը:

Նշված ծրագիրն ունի չորս հիմնական ուղղություններ՝ պաշտպանվածություն, սոցիալական ապահովություն, սոցիալական պաշտպանություն, աշխատանքային իրավունքներ: Նշված ուղղություններով 2017-2020թթ. ծրագիրը մշակելու համար կձևավորվի եռակողմ աշխատանքային խումբ, որն էլ կներկայացնի համապատասխան առաջարկություններ:

Հանձնաժողովի անդամ, Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա. Ասատրյանը, օգտվելով եռակողմ գործընկերների հետ հանդիպման հնարավորությունից, անդրադարձավ պետական աշխատողներին տրվող սոցիալաբեթի 2017-2019 թվականների միջնաժամկետ ծրագրում «հանգստի բաղադրիչի» կասեցման վերաբերյալ Հովիկ Աբրահամյանի հնչեցրած հայտարարության կապակցությամբ ճյուղային արհմիության՝ վարչապետին ուղղված գրությանը: Սոցիալաբեթի կասեցումը լայն արձագանք է ստացել արհմիության անդամների շրջանում: Մինչդեռ ՀՀ ԱՍՀՆ տեղակալի պատասխան գրությունում հստակ պատասխան չկար՝ սոցիալաբեթը կասեցվելու է, թե ոչ: ՃՀՄ նախագահն ակնկալեց արհմիության գրությունների պատասխանների առավել հստակ ձևակերպում, քանզի պատասխանները տարածվում են արհմիության բոլոր շահագրգիռ անդամների շրջանում: (Գրության մասին մանրամասն՝ 5-6 էջերում):

Նիստի ավարտին Անահիտ Ասատրյանը նիստին ներկա գործընկերներին հրավիրեց պետհիմնարկների արհմիության 85-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

## **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Հունիսի 28-29-ին Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը և ՃՀՄ գլխ. հաշվապահ Ռ. Օհանջանյանը սոցիալական գործընկերության շրջանակներում մասնակցեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության կողմից Ապարան և Գյումրի քաղաքներում կազմակերպված աշխատանքի տոնավաճառներին: Տոնավաճառներին ներկա էր ՀՀ զբաղվածության պետական գործակալության պետ Արտակ Մանգասարյանը: Ապարանի տոնավաճառ այցելեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանը, Արագածոտնի մարզպետ Գ. Գյոզալյանը, Ապարանի քաղաքապետ Գ. Աբրահամյանը: Գյումրիի տոնավաճառում բացման խոսքով հանդես եկան Շիրակի մարզպետ Հ. Սիմոնյանը, Գյումրու քաղաքապետ Ս. Բալասանյանը:

Տարբեր ոլորտներ ներկայացնող գործատուները միջոցառումներում հնարավորություն ունեցան ներկայացնել առկա թափուր աշխատատեղերը, իսկ աշխատանք փնտրողները ծանոթանալ մարզի աշխատաշուկային, ինչպես նաև պետության կողմից առաջարկվող զբաղվածության աջակցության ծրագրերին, որոնք ևս աշխատանք գտնելու հնարավորություններ են ստեղծում, հատկապես՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար:

Այցի ընթացքում ՃՀՄ նախագահ Անահիտ Ասատրյանը հանդիպումներ ունեցավ Ապարանի քաղաքապետ Գոռ Աբրահամյանի, Գյումրու քաղաքապետ Մամվել Բալասանյանի հետ՝ ներկայացնելով արհմիության կարևորությունը աշխատանքային հարաբերություններում:

Հանդիպումներ եղան նաև զբաղվածության գործակալության Արագածոտնի և Շիրակի բաժինների աշխատակիցների հետ:

Ա. Ասատրյանի և Շիրակի մարզպետարանի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Ն. Գրիգորյանի հետ հանդիպման ընթացքում ընդգծվեց արհմիության միասնության և համախմբվածության անհրաժեշտությունը, ՃՀՄ նախագահը հրավիրեց մարզպետարանի արհեստակցական կազմակերպությանը մասնակցել ճյուղային արհմիության կողմից կազմակերպվող միջոցառումներին:

Ա. Ասատրյանը այցելեց ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Շիրակի մարզային գործակալություն, ծանոթացավ աշխատանքի պայմաններին, առաջարկեց ստեղծել արհեստակցական կազմակերպություն և ընդգրկվել ճյուղային արհմիության կազմում:

# ՊԵՏՅԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԴԵՍ

ՀՀ կառավարության ղեկավարի (Հովիկ Աբրահամյանի) հայտարարությունը, որ օպտիմալացման շրջանակներում հաստիքներ են կրճատվել և կրճատվելու են, և այդ պրոցեսը իջնելու է ներքև, որոշակի մտահոգություն էր առաջացրել հասկապես միջին և ստորին օղակների աշխատողների շրջանում: Այս առնչությամբ պետհիմնարկների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը համակարգի արհմիության անդամների անունից դիմեց Հ.Աբրահամյանին՝ առաջարկելով հանձնարարել վերստին ուսումնասիրել և վերլուծել ծախսերի օպտիմալացման գործընթացը՝ շրջանցելով հաստիքների կրճատումը:

Երկրի կառավարության ղեկավարին ուղղված նամակում ՃՀՄ նախագահը նշում է.

*«Հարգարժան պարոն Աբրահամյան, մեր կառույցում ընդգրկված են հանրային ծառայողներ և պետական ոլորտի այլ աշխատողներ, որոնք մեզ հետ վերջին հանդիպումների ժամանակ մշտապես բարձրացնում են հաստիքների կրճատման խնդիրը: Առանց աշխատանքի, հետևապես, առանց ապրուստի միջոցների մնալու հեռանկարից մարդիկ խիստ անհանգստացած են:*

*Մեր ճյուղային միության ակտիվի, ինչպես նաև արհմիութենական կազմակերպությունների շարքային անդամների կողմից վերոհիշյալ խնդրի հաճախակի արժարժումը պատճառ դարձավ, որպեսզի այն քննարկվի ճյուղային միության նախագահության նիստում: Քննարկումների ընթացքում նախագահության անդամները ևս մտահոգություն հայտնեցին կրճատումների արդյունքում սպասվելիք հետևանքների կապակցությամբ, որոնք սոցիալ-տնտեսական այս դժվարին պայմաններում կարող են մեծապես նպաստել սոցիալական լարվածության էլ ավելի մեծացմանը:*

*Հաստիքների կրճատմամբ կհամալրվի գործազուրկների բանակը, ինչն էլ, անկասկած, պատճառ կդառնա արտագաղթի, իսկ արտագաղթը լրջագույն մարտահրավեր է նաև մեր ազգային գենոֆոնդին:*

*Միաժամանակ, հարկ եմ համարում հղում կատարել ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքված եռակողմ կոլեկտիվ պայմանագրի դրույթներին, որոնցով սոցիալական գործընկերության շրջանակներում կողմերը որոշակի պարտավորություններ են ստանձնել աշխատողների սոցիալ-աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորման ուղղությամբ, որոնք միտված են լինելու արդյունավետ և կայուն զբաղվածության խթանմանը, գործազրկության մակարդակի կրճատմանը, սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը:*

Նամակի վերջում ՃՀՄ նախագահը վստահություն է հայտնում, որ կառավարության միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից պետական ապարատի օպտիմալացման վերաբերյալ ներկայացվելիք առաջարկները ևս մեկ անգամ բազմակողմանիորեն կվերլուծվեն և իրավիճակին համապատասխան ու իմաստուն լուծում կտրվի:

◇ ◇ ◇

Ճյուղային միության գրությանն ի պատասխան, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դ.Հարությունյանն առաջարկեց բոլոր գերատեսչություններին և կառույցներին մշտապես ուշադրություն դարձնել ծախսերի նպատակային և արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև քննարկել ավելի քիչ կամ նույն ռեսուրսներով ավելի բարձր արդյունքի հասնելու եղանակները, քանի որ ՀՀ վարչապետի պահանջը մեկն էր՝ բոլոր ոլորտներում աշխատանքի արդյունավետության բարձրացում:

◇ ◇ ◇

Շատ չանցած՝ ՀՀ նորանշանակ վարչապետ Կարեն Կարապետյանն էլ իր հերթին հայտարարեց կտրուկ կրճատումների անցնելու մասին՝ խուճապ առաջացնելով պետական ոլորտում աշխատող բազմահազար արհմիության անդամների շրջանում:

Պետհիմնարկների հանրապետական արհմիության նախագահը վերստին դիմեց կառավարության ղեկավարին՝ առաջարկելով կազմակերպել հասարակական քննարկումներ՝

ներգրավելով պետական հիմնարկներում գործող բոլոր արհեստակցական կազմակերպություններին, շահագրգիռ ճյուղային հանրապետական արհմիություններին, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչներին և ևս մեկ անգամ բազմակողմանիորեն վերլուծել աշխատողների կրճատումներից բխող բոլոր հնարավոր բացասական և դրական հետևանքները, որից հետո միայն իրավիճակին համապատասխան լուծում տալ:

ՃՀՄ նախագահը կառավարության ղեկավարին առաջարկել է անարդյունավետ ծախսերը այլ հոդվածներում փնտրել: *«ՀՀ Կառավարության 2016թ. ծրագրում ամրագրելով, որ «անհրաժեշտ է հանրապետությունում իրականացվող արդյունավետ բարեփոխումների միջոցով ապահովել մեր երկրի գերագույն արժեք հանդիսացողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու պաշտպանվածությունը, արժանապատվությունը, կենսամակարդակի բարձրացումը, արդար հասարակության մեջ ապրելը, լավատեսությունն ապագայի նկատմամբ», այնուամենայնիվ, կառավարությունը պատրաստվում է պետական աշխատողների մի ստվար զանգված փողոց նետել՝ առանց հաշվի առնելու, որ յուրաքանչյուրի հետևում մեկ հայաստանցի ընտանիք կա:*

*Համոզված ենք, որ կրճատումներով չի հաջողվի մեծ խնդիր լուծել. գոնե քաղաքացիական ծառայողների դեպքում կրճատումներից երկրի բյուջեն առաջին 6 ամսում ոչինչ չի շահի, քանի որ նույնիսկ ռեզերվում պետք է շարունակվի վճարվել նրանց աշխատավարձը, փոխարենը միայն սոցիալական լարվածությունը կխորանա: Միննույն ժամանակ գտնում ենք, որ անհրաժեշտ է նախ քայլեր ձեռնարկել տնտեսության առողջացման ուղղությամբ և միայն նորաստեղծ աշխատատեղեր ունենալու դեպքում քայլեր ձեռնարկել համապատասխան քանակով «անարդյունավետ» պետական աշխատողներին կրճատելու ուղղությամբ», - նշվում է ճյուղային արհմիության նախագահի գրության մեջ:*

Արհմիության նախագահը վարչապետի ուշադրությունը հրավիրել է նաև հանրապետական եռակողմ կոլեկտիվ պայմանագրի դրույթներին, որոնցով *«սոցիալական գործընկերության շրջանակներում կողմերը որոշակի պարտավորություններ են ստանձնել աշխատողների սոցիալ-աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական խնդիրների կարգավորման ուղղությամբ, որոնք միտված են լինելու արդյունավետ և կայուն զբաղվածության խթանմանը, գործազրկության մակարդակի կրճատմանը, սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը: Մասնավորապես, աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող, գործատուների և աշխատողների՝ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության առումով էական նշանակություն ունեցող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, բացառությամբ օպերատիվ կարգով որոշումների ընդունում պահանջող նախագծերի, ներկայացվում են հանրապետական եռակողմ հանձնաժողովի կարծիքին՝ մինչև համապատասխան մարմնի կողմից դրանց ընդունումը:*

*Մինչդեռ, կառավարությունը աշխատանքային շահերի պաշտպանության առումով էական նշանակություն ունեցող կրճատումների հարցը հարկ չի համարել քննարկել աշխատողների ներկայացուցիչների՝ արհմիությունների հետ, սլոյալ դեպքում 12000 պետական աշխատողներ միավորող Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային արհմիության կամ տարբեր ոլորտների մոտ 190000 աշխատող արհմիության անդամներ միավորող Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչների հետ»:*

◆◆◆◆◆

Անցնող տարվա ընթացքում Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի ճյուղային հանրապետական միությունը համալրվել է երկու անդամներով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատողների նորաստեղծ արհեստակցական կազմակերպություններով:

Կազմակերպությունների նախագահներ Կարինե Գրիգորյանին և Մուշեղ Կարապետյանին մաղթում ենք արդյունաբեր գործունեություն:

## ՉԱՐԶՐԿՎԱԾ ՍՈՑՓԱԹԵԹ

ՀՀ կառավարության 2012թ. թիվ 1691-Ն որոշմամբ աշխատողներին տրամադրվող սոցիալաթերթը 2017-2019թթ. կասեցնելու ՀՀ կառավարության մտադրությունը ևս մեծ անհանգստություն էր առաջացրել մեր արհմիության անդամների շրջանում:

Բազմահազարանոց բանակի մտահոգությանն ընդառաջ՝ արհմիության նախագահ Ա.Ասատրյանը դիմեց ՀՀ վարչապետին (Հովիկ Աբրահամյանին):

Ա.Ասատրյանի դիմումում մասնավորապես նշվում է. «Պետական ծառայողներին զրկել սոցիալական փաթեթով տրվող գումարներից, նշանակում է նրանց զրկել ոչ միայն հանգստի, այլև ընտանիքի անդամի ուսման վարձի և հիփոթեքային վարկի տոկոսի վճարման, ինչպես նաև առողջության ապահովագրության լրացուցիչ ծառայությունների նվազագույն փաթեթից և (կամ) սոցիալաթերթի շահառուի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության նվազագույն բազային փաթեթից օգտվելու հնարավորությունից:

Սոցիալաթերթի կասեցման վերջնական որոշում ընդունելու դեպքում կառավարությունը հետքայլ կկատարի սոցիալական փաթեթի հատկացման իր հոչակած նպատակից, այն է՝ աշխատողների սոցիալական կարիքների բավարարում, աշխատողների մոտիվացում և աշխատանքի արդյունավետության բարձրացում, պետական մարմիններում և կազմակերպություններում աշխատանքի գրավչության բարձրացում, պետական մարմիններից դեպի մասնավոր հատված կադրերի հոսունության կրճատում և անխուսափելիորեն կյտրացնի աշխատողների անվստահությունը կառավարության նկատմամբ:

Ոլորտում կատարված չարաշահումների պատճառներից մեկը հենց անվստահությունն է. աշխատողները, վստահություն չունենալով վաղվա օրվա հանդեպ, վախենալով կառավարության անկանխատեսելի որոշումների շնորհիվ սոցիալական փաթեթի հաշիվներում եղած գումարները կորցնելուց, ընդառաջ են գնում այդ գումարները կանխիկացնելու ամենատարբեր առաջարկներին: Չարաշահումների մեկ այլ պատճառն էլ, մեր դիտարկմամբ, սոցիալաթերթի շահառուների՝ փաթեթի հնարավորությունների մասին ոչ բավարար իրազեկվածությունն է:

Առանց այդ էլ ՀՀ կառավարության 27.12.2012թ. թիվ 1691-Ն որոշմամբ համայնքային ծառայողները դուրս են մնացել սոցիալական փաթեթի շահառուների ցանկից, և դա այն դեպքում, երբ վերջիններս նույնպես հանդիսանում են հանրային ծառայողներ և պետական ծառայողների հետ միասին իրականացնում են ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով պետությանը վերապահված լիազորություններ, ինչից էլ հետևում է, որ պետությունը նրանց և պետական ծառայողների համար պետք է ապահովի սոցիալական երաշխիքներից օգտվելու հավասար իրավունքներ:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային արհմիությունը ներկայացնում է հանրային ծառայողների, այդ թվում՝ պետական աշխատողների իրավունքներն ու շահերը, հետևապես շահագրգիռ է վերջիններիս աշխատանքային, սոցիալ-տնտեսական պահանջումների բավարարման հարցում, և այդ ենթատեքստում էլ գտնում ենք, որ պետք է չեղարկել 2017-2019թթ. ընթացքում սոցիալական փաթեթի նախատեսվող կասեցումը, ավելին՝ դեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով՝ անհրաժեշտ է սոցիալաթերթի շահառուների ցանկում ընդգրկել նաև համայնքային ծառայողներին, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների (նախադպրոցական հիմնարկներ, երաժշտական, մարզական դպրոցներ և այլն) աշխատակիցներին, ինչը որոշակիորեն կապահովի ոլորտում սոցիալական հավասարակշռությունը:

Սոցիալական փաթեթի կասեցումը բացասաբար կանդրադառնա ոչ միայն աշխատողների վրա: Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ մեր հարցմանն ի պատասխան տրամադրած տվյալների՝ 2014-2015թթ. սոցիալական փաթեթների գումարներից հանգստի կազմակերպմանն ուղղվել է մոտ 13 մլրդ. ՀՀ դրամ, ինչը զգալի խթան է երկրում ներգնա տուրիզմի և ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Մասնավորապես՝ սոցիալական փաթեթի

ներդրումը առիթ հանդիսացավ բազմաթիվ զբոսաշրջային ընկերությունների ստեղծման, որոնք ՀՀ էկոնոմիկայի նախարարությանում հաշվառելու պարտադիր պայման էր առնվազն երկու ոլորտային ցուցահանդեսի մասնակցությունը: Հաշվի առնելով, որ նման ցուցահանդեսներին մասնակցությունն արդեն իսկ զգալի գումար է արժեցել, ոլորտի փոքր ու միջին ձեռնարկատերերը փաթեթի կասեցման դեպքում, ինչ խոսք, կհայտնվեն խաբվածի կարգավիճակում:

Բյուջեի խնայողությանն ուղղված կառավարության քայլերը չպետք է վատթարացնեն աշխատողների սոցիալական-տնտեսական վիճակը, այլապես, եթե կասեցման գործընթացը կյանքի կոչվի, այն կնվազեցնի պետական աշխատողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանվածության աստիճանը, կմեծացնի անվստահությունը պետության սոցիալական քաղաքականության նկատմամբ ոչ միայն աշխատողների, այլ նաև գործարարների շրջանում:

Կոչ ենք անում սոցիալական փաթեթը կասեցնելու փոխարեն քայլեր ձեռնարկել չարաշահումների վերացման ուղղությամբ, միաժամանակ հնարավորություն ստեղծել համայնքային ծառայողներին և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին ևս սոցփաթեթ տրամադրելու համար:»:



Թեև մեկ ամիս անց ստացված պատասխանում, ինչպես շատ դեպքերում, բարձրացված հարցը ուղիղ պատասխան չունի, անհասկանալի էր՝ կկասեցվի՞ սոցփաթեթը, թե ոչ, սակայն կարճ ժամանակ անց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա.Ասատրյանը ի պատասխան հայտարարեց, որ սոցիալական փաթեթում առկա չորս բաղադրիչներից որևէ մեկը կասեցված չէ: Այս պահին գործող կարգով, որը հաստատված է կառավարության որոշմամբ, սոցփաթեթի բաղադրիչում որևէ փոփոխություն նախատեսված չէ և այն ուղղությունները, որոնք այսօր նախատեսված են կառավարության գործող որոշմամբ, շարունակելու են գործել:

### **ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Ա.թ. հունիսի 17-19-ը Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիությունն անցկացրեց հերթական արտագնա սեմինարը անդամ կազմակերպությունների ղեկավարների համար:

ՃՀՄ նախագահ Անահիտ Ասատրյանի և ՃՀՄ իրավախորհրդատու Դավիթ Ավագյանի ներկայացմամբ մասնակիցները մեկ անգամ ևս քննարկեցին սոցիալական երկխոսությունը տարբեր մակարդակներում, ծանոթացան սոցիալական գործընկերության միջազգային փորձին, կոլեկտիվ պայմանագրի տարբեր մակարդակներին, կնքման գործընթացին, արհմիության իրավունքներին ու երաշխիքներին, ինչպես նաև պատասխանատվության դեպքերին այդ իրավունքները խոչընդոտելու պարագայում:

Արհմիության նախագահներն իրենց հերթին բազմաթիվ տեսակետներ արտահայտեցին նշված թեմաների շուրջ, հնարավորություն ունեցան ստացած գիտելիքները տեղում կիրառել արհմիության գործունեության կարևորագույն երաշխիք համարվող կոլեկտիվ պայմանագիր կնքելիս: Դերային խաղի միջոցով ներկայացրեցին գործատու-արհմիություն բանակցությունների ընթացքը, արհմիության առաջարկները՝ կոլեկտիվ պայմանագրում ամրագրելու համար և փոխադարձ բանակցությունների արդյունքում «կնքեցին» կոլեկտիվ պայմանագիր:

Երկօրյա սեմինարի աշխատանքներին մասնակցեցին և ճյուղային արհմիության գործունեությանը ծանոթացան նաև Հայաստանի որոշ պետական հիմնարկների՝ հանրապետական արհմիության կազմից դուրս գործող մի քանի արհմիությունների ներկայացուցիչներ:

Մեմինարն անցկացվեց Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանում և համատեղվեց մասնակիցների երկօրյա հանգստով:

**ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԵՐԹԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ՝  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ս.թ. սեպտեմբերի 19-20-ին Հայաստանի պետհիմնարկների արհմիությունը կազմակերպել էր սեմինար արհմիության լիդերների համար: Թեման «Արհմիության անդամների կազմակերպումն ու ներգրավումն» էր: Մասնակիցները ճյուղային արհմիության անդամ կազմակերպությունների ղեկավարներ էին, երիտասարդական թևի ներկայացուցիչներ, հարակից ճյուղային արհմիությունների ներկայացուցիչներ: Եվրոպական արհմիությունների փորձագետ Էդդի Սթամը ներկայացրեց արհմիության կազմակերպման և անդամների ներգրավման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Արհմիության կազմակերպումը կարևոր խնդիր է ոչ միայն Հայաստանի, այլև եվրոպական արհմիությունների համար: Նիդեռլանդի փորձագետը վիճակագրական տվյալներ ներկայացրեց արհմիության անդամակցության վերաբերյալ, մասնակիցների հետ կիսվեց արհմիության անդամներ ներգրավելու հաջողված փորձով, քննարկեցին գործատուի վրա ազդեցություն ունենալու հնարավոր ձևերը, մեխանիզմներն ու արդյունքները և այլն:

Երկօրյա սեմինարը նաև փորձի փոխանակման հնարավորություն էր: Մասնակիցների թվարկած հայաստանյան արհմիութենական խոչընդոտները, փորձագետի փաստամաբ, առկա են նաև եվրոպական արհմիություններում, որոնցից շատերը հարթվում են արհմիության յուրաքանչյուր անդամի հետ երկարատև աշխատանքի արդյունքում:

Սեմինարն անցկացվեց Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիությունների միավորման ֆինանսական աջակցությամբ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՎԸ ԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

Ճյուղային արհմիության երիտասարդական թևի հերթական արտագնա սեմինարն այս անգամ անցկացվեց Ջերմուկ քաղաքում, սեպտեմբերի 9-11-ը: Թեման «Երիտասարդական թևի առաջխաղացումն ու արհմիության իրավունքներն» էր: Մասնակիցներն ինչպես երիտասարդական թևի անդամներ էին, այլ նաև նոր երիտասարդ արհմիութենականներ: Մասնակիցները ծանոթացան արհմիության հիմքերին՝ գործելառճից ու կառուցվածքից մինչև սոցիալական երկխոսություն:

Հանդիպմանը քննարկվեցին նաև հոկտեմբերի 7-ի՝ Արժանապատիվ աշխատանքի համաշխարհային օրվա նախատեսվող միջոցառումները, առկա խնդիրները, ծրագրեցին հետագա անելիքները:

Սեմինարից դուրս երիտասարդները մասնակցեցին նաև մշակութային-ճանաչողական միջոցառումների, այցելեցին Ջերմուկի ջրվեժ, տեսարժան այլ վայրեր:

Սեմինարն անցկացվեց «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՅԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ  
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ**

Գերմանիայի արհմիությունների և քաղաքացիական հասարակությունների 32 ներկայացուցիչներ Մանֆրեդ Կուրիկի գլխավորությամբ Հայաստան կատարած ճանաչողական այցի շրջանակներում սեպտեմբերի 6-ին հանդիպել են Հայաստանի պետհիմնարկների ճյուղային հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանի հետ:

Ճյուղային արհմիության նախագահը գերմանացի հյուրերին ներկայացրել է հյուրընկալող արհմիության կառուցվածքը, գործունեության ուղղությունները, օրենսդրական և աշխատողների շահերից բխող խնդիրները, պատասխանել է հյուրերին հետաքրքրող հարցերին՝ կապված մեր երկրում սոցիալական գործընկերության, արհմիությունների իրավունքների, խնդիրների, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների հետ և այլն:

## 2017-ԻՑ ԱՅԼԵՎՍ ՉԵՆ ԿԻՐԱՌՎԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարության 882-Ն որոշումը, որով սահմանվում են աշխատանքային գրքույկը շրջանառությունից դուրս գալու հետ կապված հարաբերությունները: Նույն որոշմամբ սահմանվում է նաև, որ աշխատանքային գրքույկների ներկայացման պարտադիր պահանջը դադարեցվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո աշխատանքի ընդունվողների մասով:

Գործատուն պարտավոր է 2017 թվականի հունվարի 1-ից հետո՝ երկու տարվա ընթացքում, իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները ներկայացնել լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն՝ աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով. *այնուհետև աշխատանքային գրքույկները հանձնվելու են աշխատողներին:*

Սոցիալական ապահովության պետական ծառայությունը մինչև 2017 թվականի մարտի 1-ը պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու եղանակով ծանուցելու է գործատուին աշխատանքային գրքույկները ներկայացնելու ժամկետների մասին: Աշխատանքային գրքույկները ներկայացնելու ժամկետները չեն կարող ավելի ուշ լինել, քան 2019թ. հունվարի 1-ը:

Գործատուն, մինչև իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելը, աշխատանքային գրքույկում լրացված վերջին էջից հետո նշում է աշխատանքային գրքույկի լրացված բոլոր էջերի թիվը եւ ստորագրում (կնիքի առկայության դեպքում՝ նաեւ կնքում)՝ նշելով իր զբաղեցրած պաշտոնը, անունը եւ ազգանունը:

Աշխատանքային գրքույկները ծառայության տարածքային բաժին ներկայացնելով՝ ծառայության հետ կնքվում է աշխատանքային գրքույկների հանձնման-ընդունման ակտ:

Գործատուի ներկայացուցչին հանձնվում է ստացական գրքույկների ընդունման վերաբերյալ:

Աշխատանքային գրքույկները գործատուին են վերադարձվում դրանք տարածքային բաժին ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ օրը համաձայնեցնելով գործատուի ներկայացուցչի հետ:

Ծառայությունը տեսաներածում է (սքանավորում է) աշխատանքային գրքույկը, և էլեկտրոնային լուսապատճենը մուտքագրում է շտեմարան: Աշխատանքային գրքույկները տարածքային բաժնից ետ ստանալուց հետո գործատուն դրանք հանձնում է աշխատողներին՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

Հայաստանի պետհիմնարկների հանրապետական արհմիության սպորտային միջոցառումների մեջ ավանդական դարձած բուլիինգի չորրորդ մրցաշարն անցկացվեց հունիսի 25-ին: «Արենա» բուլիինգ սրահում ճյուղային արհմիության գավաթին հավակնում էին Երևանի անդամ կազմակերպություններից 15-ի թիմերը՝ ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ քաղաքաշինության, Էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի, Շենգավիթ, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, ՀՀ ոստիկանության, ՀՀ զբաղվածության պետական գործակալության, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի, Խարբերդի մասնագիտացված մանկատան, Հայաստանի պատմության թանգարանի, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, Երևանի պետհիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունների թիմերը:

Ճյուղային արհմիության գավաթին արժանացավ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արհմիության թիմը՝ վաստակելով 691 միավոր: 665 միավորով արժաթե մեդալների արժանացան Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի արհմիության թիմի անդամները, իսկ երրորդ տեղը զբաղեցրեց Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի արհմիության թիմը՝ վաստակելով 585 միավոր: Անհատական հաշվով 162 միավորով 1-ին տեղն զբաղեցրեց և ճյուղային արհմիության գավաթով պարգևատրվեց Արսեն Հարությունյանը՝ Արաբկիր ՎՇ ղեկավարի աշխատակազմից, 135 և 132 միավորներով երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրին համապատասխանաբար Ալեքսանդր Բալբաբյանը (ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն) և Դավիթ Ավետիսյանը (Շենգավիթ ՎՇ ղեկավարի աշխատակազմ): Մրցաշարն անցկացվում էր Հայաստանի պետհիմնարկների արհմիության ստեղծման 85-ամյակի միջոցառումների շրջանակում: